

# ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈԼԱՆ

Ֆ Ե Լ Ի Ք Ս Ի

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

ԷՄԻԼ ԶՈԼԱ (Emile Zola)

Ո ԿԱՏԱՐԵԱԼ ՔՈՂԱՐԿՈՒՄՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԵՍԻ,

Une oeuvre est un coin de la nature vu à travers un tempérament,  
Z o l a.

Մի գործ (հեղինակութիւն) բնութեան մի անկիւն է, որը մնաք հեղինակի աչքերով ենք տեսնում:

Զ ո լ ա

Օրեկտիւ բոմանը,—Հեղինակը չի կարող անտարբեր մնալ,—Զոլաի հակացքը այդ մասին:

Նատուրալիստ բոմանը պիտի անդիմական լինի: Ֆլորերը ցոյց տուց, որ այդ կարելի է, Զոլան այդ սկզբունքը օրէնքի վերածեց:

Զոլան իր վէպերում ոչ մոքեր ունի, ոչ զգացմունքներ, ոչ համզմունքներ, ոչ թուլութիւններ, ոչ ցնծութիւն, ոչ վիշտ, ոչ կրիտիկական հայեացքներ: Նա այնպիսի մի դիտող է, ինչ որ է ընթերցողը, բայց կարծես աւելի անտարբեր, աւելի սառնասիրու:

<sup>1)</sup> Տես «Առևլճ» № 6

Եւ, ճշմարիտ որ, ընթելցողը լուզւում է այս ինչ կամ այն ինչ կտորը կարդալիս, անգիտակցաբար բացականչութիւններ է արձակում կամ խորհրդածութիւններ անում իր մտքում, իսկ բովանիտոը լուռ է իր գրւածքի մէջ, նա կարող է տանջւել կամ երջանկանալ իր գործող անձերի տանջանքներով ու երջանկութիւնով, բայց ոչ մի բառով, ոչ մի հնչիւնով նա այդ չի արտապայտի, նրա լեզւին փակ է դրած:

Այսպէս էին ուղում գրել նորագոյն բովանիտոները, նրանք, ճնշելով իրանց զգացմունքները, սառնարիւն էին, կամենում մնալ:

Այսպիսով նրանք կը ցանկանացին, որ իրանց եսը միանգամայն քողարկւէր, կը ցանկանացին, որ բովանը իսկապէս մի պատմածք լինէր:

Մենք չենք խօսում առ այժմ, թէ որքան այդ կարելի է, (մի ուրիշ անգամ մենք կը տեսնենք, որ այդ մի ցնորք է—իր սիրու, իր զգացմունքները ծածկել) և թէ որքան հնարաւոր է մարդուն բոլորովին օրյեկտիւ լինել իր գրւածքներում,—մենք տրամադրում ենք միայն նատուրալիստների ցանկութիւնը:

Սակայն, չնայելով այդ ցանկութեան, գուցէ և գիտակցօրէն, յաճախ բովանիտոները անոտարեր չեն մնում դէպի իրանց գրքերում պատմած դրամաները: Յաճախ նրանք խօսում են իրանց հերոսների բերանով, յայտնում են իրանց համոզմունքները, իրանց հայեցքները, իրանց զգացողութիւնը և այլն:

Աւելացնենք արդարութեան համար, որ Զոլան ինքը զգում էր նատուրալիստների օրյեկտիւ մնալու յաւակնութեան չափազանցութիւնը, նա հասկանում էր, որ մի մարդու ձեռի գործ (այն էլ մտաւոր աշխատութեան արդինք) անհրաժեշտաբար պիտի կրէր այդ մարդու ընդհանուր տրամադրութեան կնիքը:

Նորագոյն հոգեբանական դպրոցը ամելի ևս պիտի ընդարձակէր այս միջոցը և ամբողջ փիլիսոփայական էտիւդներ տար իր բովաններում: Այս մասին մենք մանրամասն կը խօսենք մի ուրիշ անգամ:

## III ՄԻԶԱՎԱՑՐԻ ՃԻՇՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

L'homme est déterminé par le milieu.

Zola.

(Մարդու շրջավայրի պառուղ է:  
Զ ո ւ լ ո .)

Միջավայրի նկարագրութեան նշանակութիւնը. — Բնութեան և շրջավայրի ազդեցութիւնը մարդու հոգեկան շարժումների վրա. — Նկարագրելու երկու ձեերը, անտարբեր և հոգեքանական նկարագրութիւններ. — Մի օրինակ վերջին ձեի, ճշգրիտ նկարագրութիւններ պատմական և ժամանակակից վեպերում. — Զուաի լակումն և թուլութիւնը դէպի նկարագրութիւնները.

Միջավայր կամ շրջավայր (milieu, среда) անւանում ենք մենք այն աշխարհը, որի մէջ ապրում են բոմանի գործող անձերը: Միջավայրը, նեղ առնումով, հերոսի տունն է իր կահ-կարասիքով, իր բնակիչներով, — աւելի լայն նշանակութիւնով, նա ամբողջ երկիրն է, իր բնութիւնով: Նատուրալիստ բոմանը (և իբրև այս ուղղութեան ամենաբարձր յայտնութիւն — Զոլաինը) չի բաւականանում նեղ շրջավայրի ճշգրիտ նկարագրութիւնով, նրա նպատակն է ուսումնասիրել նոյնակէս և բնութիւնը, որտեղ կատարում է բոմանի դրաման:

Ինչ նպատակ ունի բնութեան նկարագրութիւնը բոմանի մէջ? Ինչ կապ կայ անձրեային եղանակի և մի սալոնում, վառ բուխարու առաջ, փափուկ բազկաթուի մէջ նասող մի օրիորդի մաքերի ընթացքի հետո:

Այսպիսի հարց տալ նշանակում է կասկածել, որ մի կապ կայ մեր ներքին աշխարհի և արտաքին բնութեան մէջ:

Մի փթած ճշմարտութիւն է, թէ մեր զգացմունքները կարող են հիմնական կերպով փոփոխւել դրսից եկած ազդեցութիւնների ներքոց: Սիրահարը տարբեր յուզմունքով, տարբեր բառերով, տարբեր տօնով է յայտնում իր սէրը սիրած առարկային, նայելով թէ որտեղ է նա. — մի գեղեցիկ այգիում թէ մի նեղ, թանձրաօդ սենեակում, ծովի ափին թէ աղքատիկ խրճիթում, տխուր թէ ուրախ հանգամանքներում: Սիր վիշտը թեթեանում է, երբ դիտում ենք մի բանաստեղծական պէզզաժ և ծանրանում է ամպամած, տախտկալի երկնքի տակ:

Հետևաբար բնութեան ճիշտ նկարագրութիւնը անհրաժեշտ է հերոսների այս ինչ, կամացն ինչ հոգեկան շարժումը և նրա գործերը հասկանալու համար:

Եթէ բնութեան ազդեցութիւնը այսպիսի մեծ է անհատի վրա, որպատի նա աւելի մեծ պիտի լինի մի ամբողջ բնակութեան վրա, որը տասնեակ տարիներ ապրում է այս ինչ կամ այն ինչ բնութեան գոգում:

Վերցրէք երկու քաղաք, մէկը ծովի ափին, միւսը նրանից հեռու: Այս երկու քաղաքների բնակիչների բարք ու վարքը, նրանց կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով տարբեր են: Մէկը ձկնորս է, միւսը հողագործ, առաջինը լողալ գիտէ, երկրորդը ոչ, առաջինի ուղեղը զբաղւած է ծովով, երկրորդինը հողով: Այս երկու միմեանցից տարբեր մարդիկ հիմնական կերպով զանազանուում են միմեանցից թէ փիզիկապէս և թէ հոգեբանօրէն, հետևաբար, նրանց գործերն էլ իրար նման չեն կարող լինել:

Այս հանգամանքը այնքան աչքի ընկնող մի հանգամանք է, որ բոլոր գրողները, ինչ ուղղութեան էլ որ պատկանէին նրանք, զգացել էին բնութեան ճիշտ նկարագրութեան կարևորութիւնը:

Զարմանալի ճշգութեան, մանրամասնութեան և ճոխութեան հասաւ իսկական միջավայրի նկարագրութիւնը նատուրալիստների գրչի տակ: Նրանց կարծիքով անկարելի է հասկանալ գործող անձերի արարքը ու զգացմունքները առանց տեղեկանալու մանրամասնօրէն այն տան մասին, որտեղ նա ապրում է, նրա սենեակի կարասիների, նրա հագուստի ձևի, նրա համակեացների մասին և այլն և այլն:

Այս տեսակէտից միջավայրի ուսումնասիրութիւնը նոյն նշանակութիւնն ունի բոմանի այս ինչ էպիզոդը հասկալու, ինչ որ ֆիզիոգիական մի փորձը հասկանալու համար՝ փորձի պայմանները:

Յիշաւի մի որ և է հոգեկան շարժում կամ որ և է արարքի շարժառիթը հասկանալու համար, երկու բան են հարկաւոր. մէկ—բոլոր նախընթաց հանգամանքները, երկրորդ—շրջավայրը, որի մէջ գտնուում է նա որոշեալ ըստէին: Մի օրինակ կը բացատրի մեր միտքը:

Ահա մի սիրահարւած երիտասարդ, նա երկար չի վստահանում իր սէրը յայտնել իր սիրուհուն:

Մի լուսնեակ գիշեր, ծաղկալից պարտէզում, օրիորդին տխուր

տրամադրութեան մէջ տեսնելով, երիտասարդը քաջալերում է և իր խոստովանանքը անումն Այս լուսնեակ գիշերը և այս ծաղկալից պարտէզը, օրիորդի այդ տիուր տրամադրութիւնը, երիտասարդին վստահութիւն տուղ հանգամանքներն էին, առանց որոնց այդ օրը նա իր խոստովանանքը չէր անի:

Նատուրալիստները, նկարագրելով մի որ և է միջավայր, սկզբնաւորապէս նպատակ ունէին ծանօթացնել ընթերցողին այդ միջավայրին, առանց ճգնելու բացատրել նրա ազդեցութիւնը գործող անձերի հոգեկան շարժումների վրա: Բայց յետոյ, երբ որ հոգեբանական տարրը իշխող հանդիսացաւ բոմանու՛ր, նորագոյն նատուրալիստ հեղինակները աշխատեցան այդ երկրորդ տեսակչափից նկարագրութիւններ տալ:

Զոլաի գրւածքներում այս տարբերութիւնը ակներև է: Երբ նա կամենում է մեզ միայն բարք ու վարքի նկարագիր տալ, նա լոկ մանրամասնութիւններ է բերում միջավայրի մասին, աշխատելով ինքը չէզօք մնալ, իսկ երբ նա իր հերոսի հոգեկան շարժումներն է ուզում բացատրել, նա դիտում է շրջավայրը այն գործող անձի հոգեկան աչքերով: Այս վերջին գէպքում այն մանր-մունր իրերը մի յատնի գոյն են ստանում և կենդաննում են, կարծես հերոսը իր հոգին փէել է շրջապատող առարկաների մէջ:

Ահա մի հատւած:

(Երկու սիրահարներ. — երիտասարդ քահանակ Աերժը և օրիորդ Ալբինը շրջում են պարտիզում):

«Այս ժամերին պարտէզը ամբողջապէս նրանցն էր. նրանք տիրապետել էին այդու բոլոր անկիւնները: Վարդենին նրանց համար էր ծաղկում, կանաչազարդ գետինը նրանց համար էր քաղցր և մեզմ բուրմունքներ արձակում, — բուրմունքներ, որոնք գիշերները ներս էին մտնում լուսամուտով և նրանց աչքերին քուն բերում: Մրգաստանը կերակրում էր նրանց, Ալբինի գողը պատղներով լլցնում և իրանց ճիւղերի անուշահոս ստւերի տակ սիրահարներին հովութիւն տալիս, երբ արեգակի ծագումից յետոյ նստում էին նախաճաշելու: Մարգագետնի վրա նրանց էին պատկանում կանաչը և ջրերը, — կանաչը, որը անվերջ տարածւում էր և լայնացնում իր

իշխանութեան սահմանները, անդադար նորանոր մետաքսեալ գորգեր փուելով սիրահարների առաջ,—ջրերը, որոնք նրանց ամենամեծ ցընծութեան աղբիւրներն էին, նրանց անբծութեան, նրանց անմեղութեան պատկերը, այն զօվացուցիչ հեղուկը, որի մէջ սիրում էին զովացնել իրանց պատանեկութիւնը ։ Նրանք տիրապետել էին անտաւը սկսած ահազին կաղնիներից, որոնց հազիւ տաս մարդ կարող էին գրկել, մինչև մացաւները, որոնց երեխան անգամ կը կառըքը. —անտասաւը իր բոլոր ծառերով, իր ստերով, իր ծառուղիներով, իր բացորակ տեղերով, իր ծաղկապատ անցքերով, որոնք թռչուններին անգամ անյատ էին, —անտառը, որի մէջ, ինչպէս մի վիթխարի վրանի մէջ, նրանք կէս օրին թագցնում էին առաւօտը ծնած գգւանքը։ Նրանք թագաւորում էին ամեն տեղ, մինչև անգամ ապառաժների ծայրերին, աղբիւրների ակերին։ Այսպէս, այժմ աջ ու ձախ նրանք տէր էին և իշխող, նւաճել էին այս երկիրը, փայլում էին բարեկամ բնութեան մէջ, որը նրանց ճանաչում էր, որը ողջունում էր նրանց և հնազանդ աղախնունման իրան զոհումներանց երջանկութեան Յետոյ նրանք երջանկանում էին երկնքով, իրանց զլիսի վերև տարածւող այն լայն կապոյա ծածկով։ Պարիսպները չէին քօղարկում այդ երկինքը, որը նրանց հայեցքին էր պատկանում և մի մասն էր կաղմումնրանց ապրելու բազգաւորութեան մէջ՝ ցերեկը իր յաղթական արևով, գիշերը ջերմութիւն անձրեւող աստղերով։ Արեգակը սքանչացնում էր նրանց օրւայ ամեն վայրկնում, փոփոխելով կենդանի մարմնի նման, առաւօտը աւելի սպիտակ, քան թէ նոր քնից զարթնող օրիորդը, կէս-օրին ոսկեզօծած, իրրեւ սիրով ու տարփանքով տուորած, երեկոյեան դալիացած, կարծես գգւանքից գալարած քաղցր յոդնածութեան մէջ։ Երեկոները, արեւը մայր մտնելիս, մի ժայռա էր ուղարկում նրանց։ Երբեմն սահում էր հրդեհած երկնքի անդորրութեան մէջ, որտեղ մի ամպ անգամ չէր նկատում, երբեմն էլ ցրւում էր ծիրանի ճառագայթների, պատուելով իր գոլորշիի ծածկոցը, որ դուրս ցատկի հրեղէն ալիքների պէս և քողարկի երկինքը, նման զիսաւոր աստղերի, որոնց աղիները հրդեհում էին բարձրաբերձ ծառերի գագաթները... Բայց բուսականութիւնը մինակ չէր, կենդանիներն էլ խոնարհւել էին նրանց առաջ։ Ալքինը

ու Սերժը ինքնակալների պէս շրջում էին խոնարհող կենդանիների մէջ։ Թիթեռնիկների երամները բարձրանում էին նրանց հայեացքը փաղաքշելու համար, հովհարում էին նրանց իրանց թևիկներով, հետևում էին նրանց, ինչպէս արեգակի կենսատու ողիներ, ինչպէս թռչող ծաղիներ, որոնք թափ էին տալիս օղի մէջ իրանց բուրմունքները ! . . . . . :

Վալտեր Սկոտուը, Կուպերը իրանց պատմական վէպերի մէջ նկարագրական մասը հրաշալի ճոխութեան հասցրին։ Նրանց տւածքնութեան նկարագրութիւնները մի-մի սքանչելի ծիթանկարներ են։ Պատմական բոմանի այս մեծ սուեզողներից յետոյ, բոմանիստները սկսեցին իսկական գիտնականների նման ուսումնասիրել հին աշխարհը, ասորեցոց, եգիպտացոց, հռովմայեցոց, պարսից և միւս ազգերի քաղաքակրթութիւնը։ Տէռֆիլ Գոտիէն իր «Կէոպատրափ մի գիշեր» վէպի մէջ, Ֆլորերը իր «Սալամբօփ մէջ» երեւում են իրքեւ լուրջ զիտեցողներ հին աշխարհի։ Նիկոտր Հիւզոն իր Notre Dame de Paris բոմանում զարմանալի ճշտութիւնով նկարագրում է հին Պարիզը։ Խակական միջավայրի նկարագրութեան մեծ կարևորութիւնը ճանաչւած էր Զոլաից առաջ Բալզակի, Ալէքսանդր Դիւմափ, Հիւգոի, Փորդ-Զանդի տւած զարկից յետոյ։ Ինչ ուղղութեան էլ պատկանէին բոմանիստները, բոլորը պահանջ էին զգում նկարագրել մարդուն շրջապատող բնութիւնը, իրերը։

Սակայն միջավայրի նկարագրութեան այն ձևը, որից մի նմուշ տալու համար առաջ բերեցինք նախընթաց հատւածը, միմիայն մեծ զրոյներին էր յաջողւել։ Ֆլորերի գրքերի մէջ, որտեղ մենք հիացումով ամեն տեսակ կատարելագործութիւններ ենք գտնում, դը Գորկուրների գրւածքներում, Ալէքսանդր Դիւմափ «Կամելիազարք Տիկին» բոմանում և մեր ժամանակակից Ալֆոնս Դոլէի<sup>1)</sup> օրինակելի վէպերում, որոնցից ամեն մէկը մի զլուխ գործոց է, մենք կարող էինք մատնանիշ անել մեծ քանակութիւնով այսպիսի նկարագրութիւններ։

<sup>1)</sup>) Յուս ունինք մի օր մի ընդարձակ էտիւդ տալ Ա. Դոլէի բոմանի մասին, որոնք նունպէս պատկանում են նասուրական դպրոցին, բայց որոնք որոշ փորմուլատի չեն նոթարիւած։

Նկարագրութեան այս ձեւը, որը կարելի է հոգեբանական ան-  
անել, անտարակոյս միակ ձևն է, որը կարող է հետաքրքրել հո-  
գեբանին:

Զոլաի նման վարպետը չէր կարող չընասկանալ և չըզգալ այս  
Նկարագրութիւնների անհրաժեշտութիւնը, իր գործող անձերի հո-  
գեկան բովէական շարժութիւնը բնորոշելու համար: Եւ այս տե-  
սակէտից նա դարուս ամենասքանչելի վիպասանների շարքն է  
անցնում:

Առհասարակ Զոլան իր գրքերի մէջ նկարագրութեանը մեծ  
աեղ է տալիս: Նա պարզապէս սիրում է նկարել: Նա հոգով ար-  
տիստ է:

Նրա բոմանները, այսպէս ասած, մի-մի պատկերահանդէսներ  
են, պատկերազարդ գալերէաներ: Եւ որքան բազմակողմանի են  
այս նկարները. կարծես ոչ մի բնական երևոյթ, ոչ մի անկիւն եր-  
կեքում ու երկրի վրա չի ուղղում անուշադիր թողնել!: Եւ ընթեր-  
ցողը պարզ զգում է, որ այս մի անդիմադրելի պահանջ է հեղինա-  
կի համար: Նա չի կարող սառնասրութիւնով մի հայեացք զցել  
Պարիզի վրա և չնկարագրել նրան առաւտօտ թէ երեկոյ, անձ-  
րեւի տակ, թէ առք արևի ճառագայթներով սփռւած: Զարմանալի  
ճշառութիւնն, զարմանալի ըմբռնութն կոլորիտի! Այնպէս որ մարդ  
զանազանում է գոյների ամենաթռուցիկ նիւյանսները (աստիճան-  
ները), զգում է նկարագրած բնութեան արևից սոսացած ջերմու-  
թիւնը, անձրեկից թափանցած խոնաւութիւնը և ձիւնի բերած  
սառնութիւնը: !!

Իր գեղարւեստական ճաշակին հետևելով, Զոլան չի կարող անցնել  
Նոր-Կամուրջի վրա, որ չընկարագրի Սենս գետը իր ափերը զար-  
դարող Պարիզի բոլոր հրաշալիքներով, լուսնեակ կամ մութ գիշեր,  
կէսօրին կամ արևը մայր մոնելիս: Անտարակոյս, Զոլաի նկարագրու-  
թիւնները չափազանց մեծ աեղ են բռնում,—անտարակոյս, յաճախ  
նրանք ոչ մի կապ չունեն գործող անձերի հոգեկան աշխարհի հետ,  
և այս կշտամբանքը մենք վստահ ասում ենք Զոլաի բոմանին. սա-  
կայն ոչ մի գեղարւեստական հոգու տէր ընթերցող չի կարող չըս-  
քանչանալ նրանցով և մի առանձին յափշտակման մէջ չընկնել:

Հետևեալ յօդւածներում մինք դարձեալ կանգ կառնենք նկարագրութեան նշանակութեան վրա հերոսի հողեբանութեան տեսակէտից:

#### IV. ՃԻՇՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒԽՆ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԵՍՆՔԻ.

„La Société c'est l' imitation“  
Tarde

Հասարակութիւնը նմանողութիւն է:  
Տարե

Բնաւորութիւնների և բարք ու վարքի նկարագրութիւններ (ըստ Պոլ Բուրժէի), — Ի՞նչ է բնաւորութիւնը և բարք ու վարքը. — Նատուրալիստի գաղափարը նկարագրութեան վրա. — Նրա սառնասրութիւնը և անսարքերութիւնը դէպի իր նկարագրածը. — Ի՞նչ է Հասարակութիւնը (նոր թէօրիա). — Զուասի սրուցրածը. — Նրա Le Ventre de Paris, Nana, Au Bonheur des Dames, Germinal, La Terre, L' Argent. La Débâcle բոմանների համաօս պարունակութիւնը:

Հասարակական կեանքի ճիշտ և մանրամասն ուսումնասիրութիւնը իսկապէս նատուրալիստ բոհանի անմիջակիոն նպատակն է: «Բարք ու վարքի բոմանը» հէնց նրանով էլ բնորոշումը է, որ «քրքրում է, հետազոտում է որոշեալ շրջանի կեանքը»:

Այս տեսակէտից բոմանիստներին կարելի է, Պ. Բուրժէին հետեւելով, երկու կարգի բաժանել. — մէկ նրանք, որոնք նկարագրում են բնաւորութիւններ (Caractère—խառարերտ.) և երկրորդ, որոնք նկարագրում են բարք ու վարք (meurs):

«Բնաւորութիւնը այն գծերն են, որոնցով մարդիկ տարբերում են միմեանցից, իսկ բարք ու վարքը պարունակում է այն գծերը, որոնցով մի մարդ նմանում է մի ամբողջ դասակարգի: Այսպիսով, նկարագրել մի բնաւորութիւն—նշանակում է երեան հանել առանձին արտակարգ անձնաւորութիւններ, նկարագրել բարք ու վարքը—նշանակում է ասպարեզնանել միջին կարգի մարդիկ: (P. Bourget)

Առաջին կարգի գրողներին պատկանում են մեծ ստեղծագործները. — Շէքսպիրը, Ստենդալը, Բալզակը, Հիւզոն, Տոլստոյնիին և այլն. բարք ու վարքի նկարագրողներն են, — Գոնկուրները, Զոլան և նորագոյն բոմանիստները մինչև հողեբանների դպրոցը:

«Բարք ու վարք նկարագրելու համար նրանք (բոմանիստները)

մանրամասնօրէն նկարագրում էին շըջավայրը, ճանաչելով նրա աեղեցութիւնը անձնաւորութեան վրա, ասում է Պ. Բուրժէն:

Հասարակութեան կեանքը այնքան բարդ է, որ նրա կատարեալ և ամենակողմանի ուսումնասիրութիւնը անկարելի է: Բոմանիստը միայն ցոյց է տալիս մեզ մի որոշեալ շըջանի որոշեալ ժամանակւայ կեանքը:

Նկարագրել կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, այնպէս, ինչպէս կազմակերպւել է դարերի ըրթացքում: — ահա նաստուրալիստի իդէալը! իրւել հասարակութեան սիրտը, պարզել նրա ծալքերը, մերկացնել նրան, որպէս զի նա երեայ իր իրական մերկութիւնով, իր կաշու իսկական գոյնով! գործող արձերի մարմինը ու հոգին քըրքըրել, մտնել նրա տունը, ցնծալ ու տանջւել նրա հետ, խորհել ու գործել նրա հետ: — ահա նաստուրալիստի իդէլ!

Իրական բոմանի ներկայացուցիչները ահազին տոկունութիւնով սկսեցին դիտել իսկական կեանքը մանրամասնութիւնները: Համարեա ոչ մի դասակարդ, ոչ մի հասարակական շըջան ազատ չմնաց նրանց հետազոտութիւններից:

Անինայ և անխափի գիտնականի պէս, որի համար չկայ ոչ վատ, ոչ լաւ, ոչ ազնիւ և ոչ ստորին իր հետազոտած առարկաների մէջ, նաստուրալիստները անաստոմիական դանակը ձեռներին մտան հասարակութեան զանազան շերտերը և սկսեցին քըրքըրել նրանց: Լաւ ու վատը, գեղեցիկն ու տգեղը, բարոյականն ու անբարոյականը նոյն գիտկականի սիրով ուսումնասիրեցին նրանք ու մեզ իրանց հետազոտութիւնների արդիւնքը տւեցին:

Բայց տեսնենք, թէ ինչ է հասարակութիւնը:

Նորագոյն մարդարանական դպրոցը հասարակութեան կազմակերպութիւնը հիմնում է հոգեբանական օրէնքների վրա: Հասարակութիւնը այնպիսի մարդկանց համագումար է, որսնք ազգում են միմեանց վրա բարոյապէս և հոգեպէս: Այս փոխազարձ ազդեցութիւնը կամաց-կամաց մեղմ

կերպով միաձևում է մարդկանց հոգեկան և մտաւոր աշխարհները և այսպիսով գոյանում են մի շարք անձեր, որոնք մի լեզով են խօսում; մի կրթութիւն են ստացել, մի կերպով են մտածում, զգում, միւնոյն իդէալները, միւնոյն ձգտումներն ունեն: Այս անձերը միասին գումարւած կազմում են մի դասակարգ, իսկ մի քանի զանազան դասակարգեր միանալով կազմում են մի հասարակութիւն:

Մի ուրիշ անգամ մենք մանրամասն կը ծանօթանանք այս թէօրիաի հետ, առ այժմ պահենք մեր մաքում այն, թէ հասարակութեան իւրաք անչիւր անդամը աղդում է մնացած անդամների բարոյական հոգեկան աշխարհի վրա և աղդում է փոխադարձաբար հասարակութիւնից: Այս փոխադարձ աղդումն արդի մարդաբանական հոգեբանութիւնը բացատրում է փոխադարձ նմանողութեան օրէնքով, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հետեւանք նոյնագէս փոխադարձ հիպնոսսման: Այս թեթև հիպնոսումները կամներշնչումները անդադար կատարում են հասարակութեան մի անդամից միւս անդամների վրա, և այսպիսով իրար նացելով, իրարից օրինակ վերցնելով, մի խօսքով իրար նմանելով, մի որ և է հասարակութեան անդամները վերջի վերջոյ մի տեսակ կրթութիւն են ստանում և ուրեմն մօտաւորապէս միակերպում են: Այս է, որ իրաւոնք է տալիս յայտնի ֆրանսիական մարդաբանին ասել. «Հասարակութիւնը նմանողութիւն է, այսինքն հաւաքական սոնամբուլիսմ (հիպնոսումն): Սակայն միայն մարդիկ չեն աղդում իրար վրա, բնութիւնն էլ, շրջապատող իրերն էլ կրթում են մարդուն: Այս բարձր աղդեցութիւնների ներքոյ, այն է՝ զաստիարակութեան, ուսման, տեսած օրինակների, նկատած երեսովների, դիտած իրերի և այլն, կազմում են մարդիկ, որոնք սերու կապւած լինելով միմեանց հետ, կազմում են մի ահագին ընտանիք, որ կոչւում է հասարակութիւն:»

Այս բացադրութիւնից ակներև է, որ մի հասարակութիւն լաւ նկարագրելու համար անհրաժեշտաբար պէտք է ուսումնասիրել մարդկանց և իրերը, այսինքն այն բոլորը, ինչ որ մենք անւանեցինք շրջապատում է հասարակութիւն:

Ճանաչել մի որ և է հասարակութեան անդամներին, ուսումնական ճագումը, նրանց յաջորդական յատկութիւնները, նրանց դաստիարակութիւնը, նրանց բարոյական, մտաւոր ու ֆիզիկական առանձնաբարկութիւնները,—յետով դուրս բերել նրանց պիմեանց վրա դործած ազդեցութիւնը (այսինքն, գիտնական բառով—ներշնչումները) —այդ կը նշանակի ուսումնասիրել մի հասարակութիւն։

Ահա այն դժւարին խնդիրը, որ կամեցաւ վճռել նասուրաւ լիստ դպրոցը։

Եւ պէտք է խոսովանել, որ նա մօտեցաւ այս խնդրի լուծմանը։ Այս տեսակէտից նա վերցնում է մի դասակարգ, ուսումնասիրում է նրան կազմող անդամներին, որքան հնարաւոր է մանրամասնօրէն, յետով դիտում է նրանց իրար վրա ունեցած ազդեցութիւնը, դրդուելով նրանց կրքերը և ազդյիսով զանազան ընդհանրումներ առաջացներով։ Բայց քանի որ հասարակութիւնը մի դասակարգից միան չի լինում բազկացած, վասնորոյ բոմանիստը անհրաժեշտաբար պէտք է միւս դասակարգերին էլ դիմէր և մացնէր իրեւ ազդով տարրեր իր նկարագրած դրուպացի մէջ։

Զոլաի բոմանները բոլորը այս պրոցդրամով են գրւած։

Le Ventre de Paris, Assomoir, Nana, Pot-Bouille, Au Bonheur des Dames, Germinal, L'oeuvre, La Terre, L'Argent, La D'ébâcle, Էմիլ Զոլաի գլխաւոր աշխատութիւններն են, որնց մէջ նա տալիս է հասարակութեան կեանքի ուսումնասիրութիւնը։

Le Ventre de Paris—(Պարիզի որկոր) վէպում մէջ բոմանիստը մեզ մի հաստ հասորում զարմանալի համբերութիւնով նկարագրում է Պարիզի դլխաւոր մթերքավաճառանոցի (Halles) պատկերը, իր աղմշկալից խլրուումով, վաճառողների Փիղիկական և բարոյական յատկանիշներով, ահազին ծանրութեան կիթոցներ կրող յաղթանդամ «բազարի ուժեղներով» (forts des Halles), այս ահազին բազարը յաճախող ամբոխի աղմկալից, դատարկ ու լի զամբիւզներով մանել դուրս գալով, մթերք վաճառող հաստափոր և կէկչան կանանց գոռում-դոչումով, իր երկաթէ ապակու պատերով ու ծածկով և ահազին շէնքի շուրջը պատող մեծ ու փոքր սալլիկներով, որնք շրջագիտականների բոլոր արդիւնաբերութիւնները, արևել դեռ ծագած, բե-

բում են—թափում այս անդրւնդը, որտեղից երկու ու կէս միլիոն բերաններ պէտք է օրւայ ուտելու պաշար տանեն:

Nana (Կանա), որի մէջ Զոլան գուրս է բերում կանանց անբարյացական գասակարգը, որը Պարիզում պաշտօնապէս տաս հազարներով է հաշում, իսկ իրավէս հարիւր-հազարներով (Չ Խմբ.), նրանց խաղացած զերը ընտանեկան բարօրութեան տապալման մէջ, հասարակական զւարձալիքների անբարյականացումն, պատանեկութեան գրաւումն, ծերերի չափշտակումն, այդընդհանուր հիմնոսումն այն կոկոտներից, որոնք լիբն են օտարոսութիւններով, որոնց հոգեկան աշխարհը կոնտրաստների, հակադիմութիւնների մի աշխարհն է, որտեղ ամենազազրելի անբարյականութեան կողքին գողնում ենք չափազանցրած բարյական զգացմունքներ, ամենամեծ պարզամտութեան մօտ—դժոխային խոր ամանկութիւն, իսկ անսահման ինքնազոհութեան մօտ—ամենաստոր անձնասիրութիւն:

Au Bonheur des Dames (Կանանց բազդը) պատական վէպը, որի մէջ այնպէս զօրեղ գրչով դուրս է բերած նոր ձևի վաճառականութեան կոխուը հին ձևի առևտորի հետ, նրա տապալող զօրութիւնը, իր ապրանքների սոսկալի դարսումներով, իր վաճառող դասի երարխիական կազմակերպութիւնով, իր բաժանմունքներով մեծ ու փոքր մասերի (քէյոնների) զանազան իրերի համար—կառքերից, մահճակալներից սկսած մինչև ասեղ-թելը, անցնելով պատրաստի հազուսոնների, ձեռնոցների, ապակեղէնների ու խաղալիքների վրայով: Ահազին մագաղիններ, որոնց չորս փողոցի վրա լայն բացւող դռներով ներս են մտնում ու յարկերը լցնում 30—40 հազար ամրոխը, —մագաղիններ, որտեղ յոգնածը հանգստանալու համար փափուկ թաւիշեաց բազկաթոռներ ունի հարուստ գրադարանի մէջ, որտեղ ծարաւողը անվճար ըմպելիքներ է ստում, իսկ ցանկացողները անվճար թուղթ ու թանաք, որքան կամենան, իրանց թըղթակցութիւնները անելու համար,—մագաղիններ, որոնց մէջ կենտրոնանում է մի ամբողջ քաղաքի առևտուրը, որտեղ օրական խրիդը համառում է երբեմն միլիոնի, որտեղ եռում է մի օտարօտի կեանք. գրգռումն կանացի պմասիրութեան, շացումն բէյնների վրա ամենքի առաջ փռած հիանալի և դրաւիչ իրերով...

Germinal (Արշալոյս), հանքաբանորների այս լուսանկարը,

որի վրա մենք կրակուս գոյներով նկարած ենք տեսնում բանորի սարսափելի տանջանկները գետնի տակ, գունաստ դէմքերով, կուցած ողնաշարով։ Մի ամբողջ հասարակութիւն, որը սարուկ է դառել իր ուժերը ծծող հանքին, որի միջից հազիւ նա մի կտոր չոր հաց է դուրս բերում, և որի մէջ կեանքը մի զազրալի անբարոյականութեան ասպարէզ է դառնում, բռնաբարած դեռահասներով, պունիցած ամուսիններով!!

La Terre (Հող), որի մէջ ֆրանսիական հողաղործը պէտք է դուրս բերել իր անսահման սիրով դէպի իր մշակած հողը, իր նեղ շրջահայեցով, իր աշխատասիրութիւնով, իր սոսկալի անբարոյականութիւնով և գարշելի ցինիսմով, որտեղ աչքի ընկնող գոյներով լուսաբանւած է հողային խնդիրը ֆրանսիայում, դրամի անդիմադրելի ոյժի ներմուծումն հողագործների շրջանը, երկրագործութեան նոր սիստեմը,—մեքենայական մշակումն երկրի, —որը անխնաց կապում է ռշաբարի ձեռները և մրցումն անկարելի դարձնում, որտեղ վերջապէս մարդը յարմարւել է իր անասուններին, որոնց հետ նա կողք-կողքի է ապրում, և օրոնցից նա փոխ է առել մինչև անդամ ազատ, աշկարայ սիրելու սովորութիւնը!!

Լ Արծաթ (Արծաթ), այս վարպետական էտիւդը Պարիզի Փինանսական աշխարհի.—բանկային մեքենայութիւններ, որոնց միջից ծագում են կապիսալի սոսկալի կուտակումներ, քրտինքով վաստակած թշւառների գրոշներից գոյացրած։ Հեղինակը այս գրքի մէջ բեմէ հանում մի ամբողջ գասակարգ, հեշտ վաստակի փափազով գրդաւած, մի դասակարգ, որի համար ոչ մի աւելի բարձր ձգտումն չկայ, բացի որային վաստակը, —մի գարշահոս մթնոլորտ, որտեղ մի քանի Գինգերմաններ և Սակարներ խաղում են մի ամբողջ հասարակութեան, մի ամբողջ երկրի բարօրութեան հետ ակցիաների միջոցով, գրաւելով և ի չար գործ գնելով ամբոխի թեթևամիտ հաւատարմութիւնը, որտեղ մի վայրկենում դիզլում են և միւս վայրկենում օդի մէջ ցնդում ահագին հարստութիւններ և որտեղ հրէացի սառնարիւն գործնականութիւնը զարմանալի անդմութիւնով տապալում է այն ամենը, ինչ որ յանդգնում է դէմ կենալ նրա ստակ վաստակելու ամեն բան լափող ախորժակին։

La Débâcle (Զախշախումն կամ Ցապալումն) ֆրանս-պրուսա-

կան սոսկալի պատերազմի այս կենդանի նկարագիրը, որի մէջ վառ գոյներով նկարադրւում է Սեղանի ահոելի կոփւը, Վրանսիական զօրքի զարհուրելի ջախջախումն, —այս սոսկալի պարտութեան պատմութիւնը, որը պիտի ֆրանսիան գոռող Բիսմարկի անգժութեանը մատնէր, նապոլէոն III-ին Վիլհելմին գերի տար և հայրենիքը անդամանատէր... Այս պատւական գրքում պէտք է դուրս բերւէր նորագոյն պատերազմական արւեստի տարած յաղթութիւնը, նապոլէոնեան միասինուական ռազմագիտական սիստեմի վրա ֆրանսիացի յետամնացութիւնը, իր տգէտ օֆիցերներով, և անձնագոհ զինուորներով, կառավարութեան անպատճառատականութիւնը, Պարիզի ամբոխի ինքնահաւանութիւնը, որը նրան աղայաբար բացականչել է տալիս՝ «A Berlin, à Berlin!!» (դէպի ներլին !):

Մենք մի քանի գրքերի մասին միայն խօսեցինք, բայց Զոլան րումանների մեծ մասը հասարակական կեանքի «էտիւզներ» են: Մենք կ'ասենք յետոց, թէ ինչ տեղ են բռնուում անձնաւորութիւնները Զոլաի այս էտիւզների մէջ, առ այժմ մեզ զբաղեցնում է նրա հասարակական կեանքի ուսումնասիրութիւնը՝ և այս տեսակէտից նրա նպատակը պարզ է, այն է, ներկայացնել մեզ հին կարգերի կործանումն և նոր կեանքի որ և է ծագումը: Այս այն յաւիտենական կոին է հին ու նորի, խաւարի և լոյսի մէջ: Այս տեսակէտից մենք Զոլաի կողքին կարողանուում ենք դնել Ալֆոնս Դողէին, Ժորժ Շնէին իրանց պատւական րոմաններով:

(Կը շաբունակւի)